Հաստատում եմ՝

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտոր, մ.գ.դ. _____ Ա.Մ. Ծատուրյան

«11» 02. 2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Սիրինա Հովհաննեսի Առաքելյանի՝ «ԱՆՁԻ ԵՍ-ԿՈՆՑԵՊՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 25-33 ՏԱՐԵԿԱՆԻ ՃԳՆԱԺԱՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ» խորագրով ԺԹ.00.01 - «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Սիրինա Հովհաննեսի Առաքելյանի՝ «Անձի Ես-կոնցեպցիայի առանձնահատկությունները 25-33 տարեկանի ճգնաժամի ընթացքում» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի նիստում (Արձ. թիվ 15, կայացած՝ 10.02.2026 թ.):

Մասնակցում էին «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի մ.գ.դ., պրոֆեսոր Պ. Գևորգյանը, ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Լ. Բաղդասարյանը, դոցենտներ՝ Ք. Վիրաբյանը, Ա. Հարությունյանը, Ա. Հովհաննիսյանը, Լ. Մարուքյանը, Զ. Գրիգորյանը, ավագ դասախոսներ՝ մ.գ.թ. Ն. Ներկարարյանը, դոցենտ Ա. Ստեփանյանը, հ.գ.թ., դոցենտներ՝ Հ. Ավագիմյանը, Վ. Միրզոյանը, Մ. Մազմանյանը,

Ա. Ղազարոսյանը, դասախոս՝ մ.գ.թ. Ն. Հովհաննիսյանը, դասախոսներ՝ Ն. Հովսեփյանը, Ա. Խաչատրյանը, Տ. Մալումյանը:

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորված է հետազոտության արդիականությունը, հետազոտության նպատակը և դրանից բխող խնդիրները, վարկածը, օբյեկտը, առարկան, ինչպես նաև ձևակերպված են հետազոտության տեսական և կիրառական նշանակությունները: Հատուկ ուշադրություն է դարձված նաև տեսամեթոդաբանական հիմքի կառուցվածքին, որն ապահովում է հետազոտության ամբողջականությունը, տրամաբանական հստակությունը և գիտական փաստարկվածությունը: Այս ամենը վկայում են, որ հեղինակը գիտական աշխատանքի կառուցման և ներկայացման բոլոր պահանջները լիարժեք կերպով կատարել է բարձր գիտական մակարդակով:

Հեղինակն իրականացրել է ծավալուն տեսական և փորձարարական ուսումնասիրություն, որի նպատակն է եղել մասնագիտական, սեռային, ծնողական և էթնիկական Ես-երի ձևավորման առանձնահատկությունների վերլուծությունը տարիքային ճգնաժամերի համատեքստում:

Ատենախոսության առաջին երկու գլուխներում կատարված տեսական վերլուծությունն առանձնանում է իր խորությամբ և գիտական հիմնավորվածությամբ: Հեղինակը հիմնվել է մասնագիտական գրականության լայն շրջանակի վրա, օգտագործելով անհրաժեշտ և բազմաբնույթ աղբյուրներ՝ ապահովելով թեմայի համակողմանի լուսաբանումը:

Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 170 համակարգչային էջ: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, գործնական առաջարկներից, գրականության ցանկից և հավելվածից: Օգտագործված գրականությունը (174 գիտական աղբյուր) արտացոլում է հետազոտվող հիմնախնդիրը:

Ատենախոսության առաջին՝ **«Անձի Ես-կոնցեպցիայի և դրա կառուցվածքի հիմնախնդիրը»** խորագրով գլխում, ներկայացված է Ես-կոնցեպցիայի էությունը և

հոգեբանության մեջ դրա հիմնախնդիրը, ինչպես նաև մի շարք հեղինակների տեսակետներ՝ Լ. Կարպենկո, Գ. Մըրֆի, Կ. Ռոջերս, Ռ. Բեռնս, Ֆ. Սիմոնդ և ուրիշներ: Ներկայացվել է Ես-կոնցեպցիայի կառուցվածքը Վ. Պետրովսկու և Ա. Նալչաջյանի մոտեցմամբ, ֆիզիկական և հոգեբանական բաղադրիչները, ինչպես նաև իրական և կեղծ Ես-երը: Անդրադարձ է կատարվել նաև վիրտուալ Ես-ին, որը ձևավորվում է սոցիալական ցանցերի և ՋԼՄ-ների ազդեցությամբ:

Երկրորդ՝ «Զարգացման ճգնաժամեր, 25-33 տարեկանի ճգնաժամի հիմնախնդիրը հոգեբանության մեջ» խորագրով գլխում ներկայացված է զարգացման ճգնաժամերի ընդհանուր տեսական շրջանակը, 25–33 տարեկանի ճգնաժամի առանձնահատկությունները և դրանց ուսումնասիրության գիտական մոտեցումները: Անդրադարձ է կատարվում Պ. Բլոնսկու և Լ. Վիգոտսկու դիտարկումներին, ինչպես նաև Դ. Էլկոնինի զարգացման փուլերին՝ ընդգծելով պատմամշակութային և հասարակական գործոնների ազդեցությունը: Ներկայացվում են 8 զարգացման փուլ և 8 ճգնաժամեր: Տեսական համատեքստում ներկայացված են Կ. Յունգի, Պ. Բլոսի, Ջ. Քոլմանի և Ս. Խուդոյանի տեսակետները: Միևնույն ժամանակ նշվում է, որ խորհրդային հոգեբանության մեջ 25–33 տարիքային շրջանը որպես առանձնացված ճգնաժամ չի դիտարկվել: Հեղինակն ընդգծում է, որ այս տարիքային փուլը որպես ճգնաժամային շրջան առաջին անգամ հիշատակվել է Է. Էրիքսոնի մոտ: Ներկայացվում են 30 տարեկանի ճգնաժամի առանձնահատկությունները, Գ. Շիհիի մեկնաբանությունները կանանց և տղամարդկանց ճգնաժամերի դրսևորումների ու տարբերությունների վերաբերյալ:

Երրորդ՝ «25-33 տարիքային շրջանի ճգնաժամի ընթացքում անձի Ես-կոնցեպցիայի առանձնահատկությունների փորձարարական հետազոտություն» գլուխը ներկայացնում է փորձարարական հետազոտության կազմակերպումը, ընթացքը, ընտրակազմի նկարագրությունը, կիրառված մեթոդները և մեթոդիկաները, ինչպես նաև արդյունքների վերլուծությունն ու մեկնաբանությունը: Հեղինակը կատարել է ծավալուն ուսումնասիրություն՝ ընդգրկելով մոտ 150 մասնակից, որոնք բաժանվել են

տարբեր տարիքային խմբերի: Հետազոտությունում կիրառվել են թեստավորում, երկու հեղինակային հարցաշարեր, գիտափորձ, դեպքի վերլուծություն և զրույցներ: Հետազոտության նպատակն է եղել պարզել 23–33 տարեկանների ճգնաժամի ընթացքում անձի Ես-կոնցեպցիայի առանձնահատկությունները:

Սիրինա Առաքելյանն ուսումնասիրել է Ես-կոնցեպցիան նախաճգնաժամային, բուն ճգնաժամի և հետճգնաժամային փուլերում: Ներկայացվել են առանձին դեպքեր, կատարվել է դրանց վերլուծություն, ինչպես նաև սխեմատիկ ներկայացվել են Ես-կոնցեպցիայի բաղադրիչները՝ ըստ իրականության հետ կապի, մասնագիտական կամ այլ ոլորտներին առնչության, պատմամշակութային ազդեցությունների, ժամանակային տեղայնացման, ձևավորման սկզբնաղբյուրների, գոյության ցանկալիության, հուզական կամ կոգնիտիվ բնույթի, սեփական Ես-ի հետ նույնացման աստիճանի, ինչպես նաև Ես-ի զգացողության առկայության կամ բացակայության:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները և գիտական նորույթը պատշաճ մակարդակով ձևակերպված են և լիարժեքորեն արտացոլված են աշխատանքի ընդհանուր եզրակացություններում: Արդյունքում արված եզրահանգումները և առաջարկությունները հիմնվում են թե՛ տեսական վերլուծությունների, թե՛ փորձարարական տվյալների համադրության վրա՝ ապահովելով դրանց գիտական արժանահավատությունը և կիրառական նշանակությունը: Այս ամենը վկայում է, որ ատենախոսությունն ունի բարձր գիտական արժեք, խորը տեսական հիմնավորում և գործնական կիրառելիություն:

Հետազոտական աշխատանքի նկարագրությունն ու քայլերի տրամաբանությունը, առաջադրված խնդիրներին համարժեք հոգեբանական հետազոտման մեթոդների, մեթոդիկաների ընտրությունը, փորձարարական տվյալների որակական, քանակական, մաթեմատիկական վերլուծությունները հավաստի են:

Ներկայացված աշխատանքը որակական առումով բարձր է գնահատվում շնորհիվ՝

- գիտական աղբյուրների մանրակրկիտ տեսական վերլուծության,
- տեսագործնական կիրառության նշանակության,

- հետազոտական մեթոդների և մեթոդիկաների համակարգի ընտրության:

Աշխատանքը գրված է գրագետ, պահպանված են գիտական գրավոր խոսքին հատուկ արտահայտչամիջոցները:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը, արտացոլում է նրա հիմնական դրույթները:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարած գիտական աշխատանքը՝ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում.

1. Լավ կլիներ մեկնաբանվեր՝ ինչու՞ են էջ 115-ում նշված Թեննեսիի «Ես-կոնցեպցիայի սանդղակ»-ի արդյունքները ենթարկվել վերլուծության, եթե նշում եք, որ հումանիտար մասնագիտություններով անձանց տվյալներն այդքան էլ օբյեկտիվ չեն, և տվյալները վիճելի եք համարում:

2. Տեքստում նշվում է, որ հետճգնաժամային ենթափուլում հետազոտվողների թիվը 47 է (էջ 109), սակայն գծապատկեր 13-ում ներկայացված է n = 51:

3. Հետազոտության փորձարարական խմբում ընդգրկվել են 25–33 տարեկան մասնակիցներ, ստուգիչ խմբում՝ 18–23 և 37–50 տարեկան: Ցանկալի կլիներ մեկնաբանել՝ ինչո՞ւ են ստուգիչ խմբում ընդգրկվել 18–23 և 37–50 տարեկանները:

4. Աշխատանքում կան լեզվական սխալներ (օրինակ՝ էջ 84-ում դրանք բառը գրված է լատինատառ, «տեսակետեր» բառը պետք է լինի «տեսակետներ»), օգտագործված են նաև օտարալեզու բառեր, որոնց հայալեզու տարբերակները գոյություն ունեն և գործածվում են (օրինակ՝ պրոֆիկալտիկ, լոկոմոտիվ, մեթոդոլոգիա, ստերեոտիպ, պարամետր, էպիզոդ):

5. Աշխատանքում առկա են տեխնիկական բնույթի սխալներ և վրիպակներ: Այսպես, օրինակ, գրականության ցանկը միանման ձևով չէ ներկայացված. որոշ հեղինակների անուններից հետո դրված են ստորակետներ, որոշ հեղինակների անուններից հետո՝ ոչ (տես 98, 104, 106, 111, 113 և այլն): Բացի այդ, որոշ աղբյուրներում նշվում են էջերի համարները, մյուսներում՝ ոչ: Ատենախոսության էջ 57-ի

մի հատված կրկնվում է էջ 75-ում (տե՛ս Ս. Խուդոյանի միտքը՝ կապված նորածնության, 2 ամսականի, 1 տարեկանի ճգնաժամերի հետ):

Վերը նշված դիտողությունները չեն արժեզրկում ատենախոսության գիտական նշանակությունը: Հեղինակի կողմից ստացված գիտական արդյունքները, կատարած եզրահանգումները կարելի է որակել որպես հոգեբանության մեջ գիտական հիմնախնդրի լուծում և ներդրում հոգեբանության բնագավառում:

Եզրակացություն

Հետազոտության թեմայի արդիականությունը, գործնական նշանակությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Սիրինա Հովհաննեսի Առաքելյանի՝ «Անձի Ես-կոնցեպցիայի առանձնահատկությունները 25-33 տարեկանի ճգնաժամի ընթացքում» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն գիտական աշխատանք է, համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է հայցվող հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ,
մ.գ.թ., դոցենտ՝ Լ.Գ. Բաղդասարյան

Լ. Բաղդասարյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՎՊՀ-ի գիտքարտուղար,
մ.գ.թ., դոցենտ՝ Ս.Ս. Բեժանյան